Նախագիծ

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՄԻՋՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՂ ՎԱՐԺԱՆՔԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

1. ՎԱՐԺԱՆՔԻ ԹԵՄԱՆ

«Հայ-վրացական պետական սահմանով ռադիոակտիվ նյութերի ապօրինի շրջանառության հայտնաբերում և կասեցում»:

2. ՎԱՐԺԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Վարժանքի նպատակն է բարձրացնել հայ-վրացական պետական սահմանով ռադիակտիվ նյութերի ապօրինի տեղափոխության հայտնաբերման և կասեցման գործողությունների ունակությունները, ինչպես նաև կատարելագործել և համակարգել հայ-վրացական պետական սահմանի համալիր կառավարման ոլորտում ներգրավված Հայաստանի Հանրապետության և Վրաստանի պետական մարմինների, դրանց առանձին ստորաբաժանումների գործողությունները՝ օպերատիվ համագործակցությունը, տեղեկատվության փոխանակումը և արագ արձագանքումը:

Վարժանքը պետական սահմանի համալիր կառավարման ոլորտում ներգրավված Հայաստանի Հանրապետության և Վրաստանի պետական մարմիններին հնարավորություն կընձեռի գնահատել՝

- երկու երկրների սահմանի համալիր կառավարման ոլորտում ներգրավված գերատեսչությունների միջև հաղորդակցությունն ու համագործակցությունը,
- Հայաստանի միջգերատեսչական հաղորդակցությունն ու համագործակցությունը,
- Վրաստանի միջգերատեսչական հաղորդակցությունն ու համագործակցությունը,
- ռադիոմետրիկ և այլ սարքավորումների կիրառումն ու պահպանումը,
- գործողությունների արդյունավետությունը,
- տեղեկատվության փոխանակման արդյունավետությունը,
- առկա ռիսկերը,
- անցման կետերի և կանաչ սահմանի ընթացակարգերի համատեղումը,
- հակազդեցության և հայտնաբերման ընթացակարգերի համատեղումը,
- միջազգային տեխնիկական աջակցության կիրառումը,
- ճառագայթային անվտանգության պահպանումը և արձագանքման ընթացակարգերը:

3. ՎԱՐԺԱՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև պետական սահմանով ռադիոակտիվ նյութերի մաքսանենգության հայտնաբերման և կասեցման վերաբերյալ կազմակերպչական, վարչարարական, օպերատիվ-հետախուզական, զորային և այլ տարատեսակ ուժերի ու գերատեսչությունների համաձայնեցված համալիր միջոցառումների իրականացում,
- ՀՀ ԱԱԾ, ՀՀ Ոստիկանության, ՀՀ Ֆինանսների նախարարության Մաքսային ծառայության և ՀՀ Պաշտպանության նախարարության միջև համագործակցության կատարելագործում՝ ուղղված սահմանային հանցագործությունների դեմ,
- Վրաստանի գերատեսչություններ,
- Պետական սահմանով ռադիոակտիվ նյութերի ապօրինի շրջանառության հնարավոր ուղղությունների ժամանակին բացահայտում, օպերատիվ հակազդում և զորային պահպանություն,

- Հայաստանի Հանրապետության և Վրաստանի պետական սահմանում հանցավոր խմբավորումների հնարավոր ապօրինի գործունեության կասեցման գործուն մեխանիզմների մշակում,
- Հայ-վրացական պետական սահմանի հուսալի պահպանությունն ապահովելու նպատակով սահմանի համալիր կառավարման ոլորտում ներգրավված Հայաստանի և Վրաստանի գերատեսչությունների միջև համագործակցության ամրապնդում:

4. ՎԱՐԺԱՆՔԻ ՍՑԵՆԱՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐ

Վարժանքի սցենարը հետևյալն է՝ ռադիոակտիվ նյութերի ապօրինի տեղափոխումը պետական սահմանով հանցավոր խմբի կողմից:

Ըստ օպերատիվ տվյալների Հայաստանի Հանրապետության և Վրաստանի տարածքում կազմավորվել է կայուն հանցավոր խմբավորում, որը փորձում է հայթհայթել ռադիոակտիվ նյութեր՝ արտահանելու և ահաբեկչական խմբավորումների ներկայացուցիչներին փոխանցելու նպատակով:

Հայաստանում մի անձ ձեռք է բերել ռադիոակտիվ նյութեր և նախատեսում է վաճառել այն հանցավոր խմբի: Զբոսաշրջիկների պատրվակով հանցավոր խմբավորման ներկայացուցիչներն օրինական կերպով հատում են հայ-վրացական պետական սահմանը դեպի Հայաստան: Հայասատանում ներկայացուցիչները հանդիպում են վաճառողին և ձեռք բերում ռադիոակտիվ նյութերը: Հանցագործները փորձում են արտահանել ռադիոակտիվ նյութերը պետական սահմանի «Բավրա» անցման կետով և կանաչ սահմանով դեպի Վրաստան: Հանցագործներից մեկը ձերբակալվում է պետական սահմանի «Բավրա» անցման կետում սահմանային և մաքսային հսկողություն իրականացնելու ժամանակ, իսկ մյուսին կանխամտածված թույլատրվում է անցնել Վրաստան:

Վրաստանում իրականացվում է «Բավրա» անցման կետով պետական սահմանը հատած հանցագործի հետապնդում, նրա գործակալների հայտնաբերում (Հայաստանի Հանրապետության և Վրաստանի սահմանապահ ուժերի և պետական սահմանի համալիր կառավարման ոլորտում ներգրավված պետական մարմինների համագործակցության հարցեր): Վրաստանում իրականացվում է հանցավոր խմբավորման պայմանական անդամների ձերբակալում:

«Աշոցք» կանաչ սահմանի տեղամասում իրականցվում է սահմանային որոնում՝ հանցագործներին հայտնաբերելու և ձերբակալելու նպատակով (Հայաստանի Հանրապետության և Վրաստանի սահմանապահ ուժերի համագործակցության հարցեր): Հանցագործներից մեկը ձերբակալվում է, սակայն մյուսին հաջողվում է փախչել և հատել սահմանը անցնելով Վրաստան: Վրաստանի սահմանապահները հետապնդում են և ձերբակալում երկրորդ հանցագործին:

5. ՎԱՐԺԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՐԿ

Վարժանքը նախատեսվում է անցկացնել 2015 թ. հունիս ամսվա վերջին տասնօրյակում:

Նախապատրաստական աշխատանքներ՝ վարժանքից 48 ժամ առաջ:

Վարժանքի ընդհանուր տևողությունը՝ 96 ժամ

- օր 1՝ Հայաստանի անցման կետ,
- օր 2՝ Հայաստանի կանաչ սահման,
- օր 3՝ Վրաստանի անցման կետ,
- օր 4՝ Վրաստանի կանաչ սահման
- օր 5՝ վարժանքի արդյունքների ամփոփում:

Նախատեսվում է կազմակերպել հայ-վրացական համակարգման հարցերով 3 հանդիպում՝ ԱՄՆ ներկայացուցիչների մասնակցությամբ:

Հանդիպումները տեղի կունենան՝

- 2014թ. դեկտեմբերին՝ Վրաստանում,
- 2015թ. մարտին՝ Հայաստանում,
- 2015թ. մայիսին՝ վարժանքի տեղամասում (կատարել տեղազննություն):

Հաջորդող հանդիպումների և դաշտային վարժանքի հստակ օրերը կորոշվեն դեկտեմբերին նախատեսվող հանդիպման ժամանակ:

Վարժանքի անցկացման վայրը՝ «Բավրա» պետական սահմանի անցման կետ և «Աշոցք» կանաչ սահման:

6. ՎԱՐԺԱՆՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԽՈՒՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆ

1. ՀՀ ԱԱԾ – 1 ներկայացուցիչ,
   - ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքեր - 3 ներկայացուցիչ,
2. ՀՀ ԱԳՆ – 1 ներկայացուցիչ,
3. ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ – 1 ներկայացուցիչ,
4. ՀՀ ՊՆ – 2 ներկայացուցիչ,
5. ՀՀ ՖՆ – 3 ներկայացուցիչ,
6. ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե – 1 ներկայացուցիչ:

ՎՐԱՍՏԱՆ

7. ՎԱՐԺԱՆՔԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆ

1. ՀՀ ԱԱԾ – ,
   - ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքեր - ,
   - ՀՀ ԱԱԾ Շիրակի մարզային վարչություն - ,
2. ՀՀ ԱԳՆ – ,
   - ՀՀ ԱԳՆ ՍՎՄԱ վարչություն -,
3. ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ – ,
   - ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչություն - ,
4. ՀՀ ՊՆ – ,
   - ՀՀ ՊՆ – ,
5. ՀՀ ՖՆ -,
   - ՀՀ ՖՆ ՄԾ – ,
6. ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե – ,

ՎՐԱՍՏԱՆ

ԴԻՏՈՐԴՆԵՐ – ԱՄՆ

8. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆ

<u>Անցման կետում կիրառվող միջոցներ</u>

- ստացիոնար ռադիոչափիչ մոնիտորներ,
- ռադիոակտիվ նյութերի հայտնաբերող դյուրակիր սարքեր,
- կապի միջոցներ,
- տրանսպորտային միջոցներ,
- ռադիոակտիվ նյութ,
- այլ միջոցներ:

<u>Կանաչ սահմանում կիրառվող միջոցներ</u>

- ռադիոակտիվ նյութերի հայտնաբերող դյուրակիր սարքեր,
- ազդանշանային համակարգ,
- դիտարկման սարքեր,
- լուսավորման միջոցներ,
- կապի միջոցներ,
- տրանսպորտային միջոցներ,
- ռադիոակտիվ նյութ,
- այլ միջոցներ:

ՎՐԱՍՏԱՆ